

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ ԸՆԹԵՐՑԵԱԼ Է ԶՅՈՂԱՆՆՈՒ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆՍ ՄԱՏԹԵՅԻ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ ԵՒ ԶԹՂԹՈՑՆ ՊԱԻՂՈՍԻ*

5 Ապրիլ 1910**

Պատառիկ ի Մեկնութեան Մատթէի, Ա. 1. Մեկնութիւն Երգոց Երգոց, 274—275:

Միւս եւս Պատառիկ ի Մեկնութեան Մատթէի, 2Բ, 105. Մեկնութիւն Երգոց Երգոց, 314, ուր յերես 312 յիշէ եւ զ«Յոհան Ոսկերեան»:

Աղփատութեան հնոց, Աղաբամատոյց, ԻԶ, Բ, 62. «Աղփատութեան հնոց», Մեկ. Մտք., Դ Յորդ., 64, 65, երկիցս: — «Հնոց աղփատութեան», անդ, 66, «Հնոց տնանկութեան», անդ, 65: Առեալ է յենայեայ, ԽԸ, 10, «Հնոց աղփատութեան»: — «Հնոց աղփատութեան», ՂԷՆՈՂ Վարդապետ, Պտմ., 1Գ, 136:

Ամենասպառ. «Իսկ որ առ իս կրին սըխալմունք՝ գերազանցէ քան զհեղեղին ջրակուտակ տիեզերասոյոյ ամենասպառ ծովուն յորդութիւն», Աղաբամատոյց, ԺԵ, Գ, 34. — «Ոչ ի համբաւելն (Հրէից) զքեզ կորուսեալ, եւ իբր զերկրաւոր մարմին զողացեալ, համայնաջինջ եւ ամենասպառ զսերմն ծննդոցն կրճատեցեր» անդ, 1Զ, Բ, 98. «Թէ չթուիցի՞ քեզ նշանակ զեհեհին համաջունջ ամենասպառ ջրհեղեղն» (տպ. «զեհեհին ի համաջունջ ամենասպառ ջրհեղեղն»), Մեկն. Ա Տիմ., ԺԵ, Յորդ., 138: Զիք այլուր «Ամենասպառ»: Տե՛ս եւ Համայնաջինջ:

Յառաջնումն պատասխանուց. «Որ թէպէտ եւ ոչ պատահիմ անուանիլ արդար, սակայն յառաջնումն պատասխանուց իբր ընդ ոսոխի ումեմն՝ ընդ անձին յաւտարամիտ կամաւք ոգորիմ, ըստ իմաստութեանն բանի», Աղաբամատոյց, Թ, Գ, 21. «Արդարն անձինն ամբաստանէ յառաջին պատասխանուցն», Մեկն. Երբ., Թ, 498: — «Արդարն յառաջին իսկ պատասխանուցն

* Այս անտիպը պահուած է Նորայր Ն. Բելզան-գացու գրականում, Տուփ 5: (Մ. Մինասեան):

** Հեղինակը գրել է այս թուականին, բայց 2-րդ էջում նշել է. «Կրկին ընդօրինակեցի, յ31 Աւգոստոսի 1914 զայս առաջին երես առ ի փորձել զնոր թուղթն»: (Մ. Մ.):

ոսոխ լինի անձին իւրում», Մեկն. Ես., ԽԳ, 307, որ է բանն Առակաց, ԺԸ, 17, «Արդար՝ անձին իւրում չարախաւսէ ի սկզբան բանից իւրոց»:

Ասպակասպա, ան., «որ սպասէ ասպակի կամ փշրանաց սեղանոյ տեառն իւրոյ (չուն)». «Ընդ Քանանուհոյն ձայնի ի խորոց սրտիս պաղատիմ, սովեցելոյս ասպակասպա կաղկանձողական ամենաթշուառ վտանգաւորիս, ասրուստ կերակրոյ փշրանաց հացի ի բազմամեղդ քո սեղանոյ մասնաւորեցես», Աղաբամատոյց, 1Է, Գ, 97: Տպագիրն ունի Ասպակասպա¹. այսպէս եւ Նոր Հայկազեանն, որ եւ մեկնէ. «ա. Գ. Որ կայ ի սպասու ասպականւոյ, այսինքն որսորդի. որսորդ չուն, բարակ որսական, ավ քէօփէյի, գաղար...: Իսկ 1Ծ, Նար., առեալ որպէս զոյական՝ զնէ. Ասպակասպա, լափն է՝ զոր տան շանն»: Այլ ի համեմատութեանէ յաջորդ բանիդ Ոսկերեանի յայտ է զի ուղղելի է Ասպակասպա, այս ինքն՝ Որ սպասէ ասպակի. «Եւ զի չունք կոչէին հեթանոսք, լուր Քանանացոյ կնոջն զինչ ասէր. «Այո, Տէր, եւ չունք կերակրին ի փշրանացն որ անկանիցին ի սեղանոյ տեղանց իւրեանց»²: Զի մի՛ եւ զայն եւս ունիցին՝ թէ իբրեւ չունք՝ սեղանոյն ասպակի ապասիցեմ, անէ ի նոյն որով եւ աւտարոտիս իսկ ցուցանիցէ. «Զղոյշ լերուք ի չար մշակացն» ասէ», Մեկն. Փիլիպ., Ժ, 459:

«Ասպակ. Գ. (ուտելիքի) պատառ կամ փշրանք», Առձեռն Բառարան Հայկագնեան

¹ Հ. Սրապիոն Էմինեան ի սխալ բառէն Ասպակասպա՝ յօրինած է ասպատանասպա Estafier (10 Մայիս 1915): Իսկ «Առագաստասպա», Պտմ. Ապարանից Խաչին, 381, նշանակէ՝ Որ սպասուորէ առագաստի հարսանեաց: Սխալ գրէ եւ Հ. Արսէն Բազրատունի ի Վերդիլեայ Մշակականս, Գ, 407, Ծան. «Սպարտոյ կամ Լակեղեմոնի չունքն առաւել յագգէ բարակաց էին, զպատք եւ սուր հոտոտելօք, քաջ ասպակասպաւք»:

² «Այո, Տէր, քանզի եւ չունք կերակրին ի փշրանաց անկեւոց ի սեղանոյ տեառն իւրեանց», Մտթ., ԺԵ, 27:

լեզուի, երկրորդ տպագրութիւն: «Եւ միայն ի ձեռն սակաւ սատարիս այսմ՝ ունի ակն մեծի զթութեան Աստուծոյ վասն աղաւթից ձերոց, զոր հայցեմ լուութեամբ զրոյս, իբրեւ զսովեալ սպասեալս առ ընթեր սեղանոյ մեծատանց», Վարդան [Արեւելացի], Յիշատ. ի ծատանց», Վարդան [Արեւելացի], Յիշատ. ի Միխայէլ Աստրի, տպ. 1870, երես 620: Թուի ինձ թէ Վարդան զրած է ասպակասպա, զոր գրիչն չհասկանալով՝ փոխած է սպասեալս: (3 Մայիս, 1914):

Գանգաչեցուցանեմ. «Ոչ գանգաչ նիւթոյ պղնձոյ գանգաչեցուցեալ, եւ ոչ քար ընդ վիրդս սալի առանց քաղցրութեան առ նոյն վերկուցեալ», Աղաբամատոյց, 1Բ, Ը, 243: Տպագիրն ունի դանդաչեցուցանեմ եւ ի Նոր Հայկազեանն ի Դանդաչեցուցանեմ եւ Չանգաչ. վաղ իսկ յամին 1880 ուղղեալ եմ Զանգաչ. վաղ իսկ յամին 1880 ուղղեալ եմ Զանգաչեցուցեալ ըստ յաջորդ բանիդ Ոսկերեանի իմ Հայկական Բառաբանութեան, երեսք 9—10: Տե՛ս եւ Զանգաչեցուցանեմ ի նորին Նարեկացոյ «Պատմութիւն Ապարանից Խաչին», երես 381, տող վերջին. եւ Գանչուքիւն, Աղաբամատոյց, 1Բ, Ը, 243: Այլ է Քիւն, Աղաբամատոյց, 1Բ, Ը, 243: Այլ է Դանդաչեցուցանեմ. «Գինի դանդաչեցուցա-

նէ եւ մոլորեցուցանէ», Գր. Նաղիանզացի, Կարկտ.: — «Զմէջն ընդարմացուցանէ, զսիրտն զողացուցանէ, զգլուխն դանդաչեցուցանէ», Եփրեմ, Յաղագս Աղաբից, 225: «Յորժամ հաւ զառաջինն խաւսիցի, ոչ որպէս աստ՝ ի տունս խորդան ծառայք, դուրք փակեալ, եւ ամենեքին նման մեռելոց կան ծանրարթունք, եւ պահայոյզն միայն՝ զգանգալսն գանգաչեցուցանէ», Մեկն. Ա Տիմ., ԺԳ, Յորդ., 124:

Գնացք երակաց. «Նիւթք ցաւոց խոցոման մահու ի գնացս երակաց գոյութեան լերդի», ԻԶ, 4, 63. «Յորժամ չառնու խիւս մարմինն, յորժամ գնացք երակացն խնուցուն, յայնժամ մեռանի. յորժամ խողովակքն փակիցին, յայնժամ հեղձնուն», Մեկն. Եփես., Գ, Յորդ., 700:

Զվկայութիւն Նարեկացոյն գտի ի 5 Ապրիլ 1910: «Արեան երակաց ընթացք», ՀԵ, ԺԲ, 200. 27 Աւգոստոս 1915:

ՆՈՐԱՅՐ Ն. ԲԻԷԶԱՆԴԱՑԻ*

* Հեղինակը չի ստորագրել: